ԾՐԱԳԻՐ

ԻՋԵՎԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի ՍԻՐՏ-ԱՆՈԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԲՈՒԺՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՏԱՍՆԱՄՅԱ

ԻՋԵՎԱՆ 2020

1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

''Իջևանի ԱԱՊԿ'' ՓԲԸ-ն վերակազմակերպվել է 29.05.2009թ. Տավուշի մարզպետի թիվ 46-Ա որոշմամբ: Ընկերության պետական գրանցման վկայականի համարն է 01 Ա 029196:

1.1 Կազմակերպության նպատակներն եվ խնդիրները

''Իջևանի ԱԱՊԿ'' ՓԲԸ-ի սիրտ-անոթային համակարգի հիվանդների բուժսպասարկման նպատակները.

''Իջևանի ԱԱՊԿ'' ՓԲԸ-ի նպատակն է որակյալ և անվտանգ ժամանակակից բուժօգնության ցուցաբերումը յուրաքանչյուր այցելուի, կարևորելով բուժօգնության որակը, մատչելիությունը, հասանելիությունը և այլ սկզբունքներ հաստատված ՀՀ Առողջապահության Նախարարության և ԱՀԿ-ի կողմից.

- *Առողջության Առաջնային Պահպանման գործունեության միջոցով իրականացնել հիվանդությունների կանխարգելիչ աշխատանքներ:*
- *Իրականացնել հիվանդությունների վաղ հայտնաբերում և բուժում՝ իջեցնելով բնակչության մահացության ցուցանիշը, ապահովելով բարձր բնական աճ:*
- *Իջեցնել սիրտ-անոթային համակարգի հիվանդություններից մահացությունը,*
- *Ծավալել ցերեկային ստացիոնար ծառայություն բարձրացնելով բուժօգնության մատչելիությունը:*

''Իջևանի ԱԱՊԿ'' ՓԲԸ-ի սիրտ-անոթային համակարգի հիվանդների բուժսպասարկման խնդիրները.

- *Իջևանի տարածաշրջանի սիրտ-անոթային համակարգի հիվանդները, որոնք կարիք ունեն էխոսրտագրության, առիթմիաների վաղ հայտնաբերման համար ուղեգրվում են Երևան*
- *Իջևանի տարածաշրջանում չկա կոմպակտ սիրտ-անոթային համակարգի հիվանդների ախտորոշման և բուժման կոմպակտ բաժանմունք*
- *Իջևանի տարածաշրջանում չկա ցերեկային ստացիոնար բաժանմունք, որտեղ բուժում կստանան ոչ ծանր հիվանդները:*

Նշված խնդիրների համար է նախատեսվում օգտագործել ընկերության մասը կազմող տարածքը, որը ջեռուցման և կոմունալ համակարգերով միացյալ է ամբողջ մասնաշենքի համար:

1.2 Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

''Իջևանի ԱԱՊԿ'' ՓԲԸ-ն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով, իր կանոնադրությամբ ՀՀ կառավարության Առողջապահության Նախարարության կողմից հաստատված և այլ իրավական ակտերով:

1.3 Ընկերությունում առկա մարդկային ռեսուրսներն են

- *Վարչական մաս – 5*
- *Բժիշկներ – 28*
- *Միջին բուժ-անձնակազմ – 45*
- *Կրտսեր բուժ-անձնակազմ – 4*
- *Տեխնիկական մասի աշխատակազմ – 7*

1.4 Կազմակերպության գործունեության ոլորտը

- *Իջևանի տարածաշրջանի ազգաբնակչության առողջության առաջնային պահպանման գործունեության իրականացում /49000 բնակիչ/*
- *Շտապ անհետաձգելի դեպքերի բուժօգնություն*
- *Հղիների բուժ-հսկողության իրականացում*
- *Նեղ մասնագիտական և լաբորատոր-ախտորոշիչ բուժօգնության իրականացում:*

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

2.1 Ծրագրի նպատակը

- *Բարելավել սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների վաղ հայտնաբերումը*
- *Բարելավել սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների ախտորոշման և բուժման մատչելիությունը*
- *Իջեցնել սիրտ-անոթային համակարգի հիվանդների մահացության և հաշմանդամության ցուցանիշները*
- *Կազմակերպել ոչ ծանր հիվանդների ցերեկային սպացիոնար բուժումը*
- *Նվազեցնել սիրտ-անոթային համակարգի հիվանդների ուղեգրումը Երևան*

2.2 Ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրները եվ ծավալները

Սույն ծրագրի շրջանակներում ընկերության գործունեության կազմակերպման ֆինանսական աղբյուրներն են հանդիսանում՝ ***ընկերությունը իր սեփական միջոցներով:***
Ընկերությունը մեկ տարվա ընթացքում նախատեսում է ներդրում 8.269.000 ՀՀ դրամ, որից

- *Ներքին և արտաքին վերանորոգում - 4.262.000 ՀՀ դրամ*
- *Բժշկական սարքավորումներ – 3.587.000 ՀՀ դրամ*
- *Փափուկ գույք և կահույք - 420.000 ՀՀ դրամ*

2.3 Ծրագրի իրականացման ժամկետները

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել տաս տարի:

2.4 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Առաջին տարվա ընթացքում ամբողջությամբ ավարտել նշված տարածքի վերանորոգման աշխատանքները:

Նշված տարածքում տեղաբաշխել սիրտ-անոթային ախտորոշման բաժանմունք՝ ունենալով հետևյալ ծառայությունները.

- Սրտաբանի կաբինետ
- Ֆունկցիոնալ ախտորոշման կաբինետ /ԷԿԳ, ՀՈԼՏԵՐ հետազոտություն/
- Սրտի էխոգրաֆիա
- Ցերեկային ստացիոնար ծառայություն /2սենյակ, 4 մահճակալ/
- Միջամտությունների և անհետաձգելի բուժօգնության սենյակ
- Ախտահանման կաբինետ

2.5 Ծրագրերի իրականացման ակնկալվող արդյունք

Իջևանի տարածաշրջանի բնակչությանը մահաբերության կառուցվածքում սիրտ-անոթային համակարգի հիվանդություններից մասնաբաժինը կազմում ՝ 78-80%: Սիրտ-անոթային հիվանդությունների կանխարգելման վաղ ախտորոշման և բուժման համար անհրաժեշտ է մի շարք լաբորատոր-գործիքային հետազոտությունների իրականացում, որոնց մեծ մասը իրականացվում է ք. Երևանում: Օրինակ՝ Հոլտեր հետազոտություն, Սրտի էխոգրաֆիա, Տրեդմիլ թեստ հետազոտություն: Հետևապես անհրաժեշտություն է առաջացել տարածաշրջանում ունենալ փոքր սիրտ-անոթային հիվանդությունների ախտորոշիչ բաժին: Ակնկալում ենք օրեկան ունենալ 10-12 այցելու:

Հիվանդանոցային ուղեգրումները հետևապես պետական ծախսերը նվազեցնելու համար նախատեսվում է թեթև և միջին ծանրության հիվանդների բուժումը կազմակերպել ցերեկային ստացիոնարում, տեղավորելով՝ 4 մահճակալ: Բուժօգնությունից օգտվելու են տարեկան 1450-1550 հիվանդներ:

Աշխատանքների համար կունենանք աշխատատեղեր

Բժիշկ 1 հաստիք – 174000

Բուժքույր 3 հաստիք – 94000

Կրտսեր բուժաշխատող 1 հաստիք – 85000

Ինչպես նաև 13 բժիշկ համատեղությամբ կաշխատեն ցերեկային ստացիոնարում բուժելով իրենց կցագրված հիվանդներին, ստանալով հավելավճարներ:

Տնօրեն՝ **Գ.Նազինյան**